

18763

371.2

m-50

2010

MR 2001

ԱԼԱ
ԿԱՓԻ
ՕԼԿԱ №

Օր. Ա. Մ. 893
Am-1447

371.2

Գ. Ս. ՊԵՏՐՈՎ

ՈԳԻՆ ՄԻ՝ ՀԱՆԳՑՆԷՔ

Թարգմանեց
ՄԻՔԱՅԷԼ ԶՈՒԲՈՐԵԱՆ

98/125



Նոր-Նախիջևան
Տպարան Ս. Յ. Ասադյանի

Нахичевань н-д.
Тип. С. Я. Авакова

1912

Am-1447

Апр.
3-3763a

371.2
7-50

Գ. Ս. ՊԵՏՐՈՎ

Am-1947

3-3763a

ՈԳԻՆ ՄԻ՝ ՀԱՆԳՑՆԷՔ

Թարգմանեց
ՄԻԲԱՅԷԼ ԶՈՒԲԱՐԵԱՆ



ИНВ. № 20952

Նոր-Նախիջևան
Տպարան Ս. Յ. Ասադեանի

Нахичевань н-Д.
Тип. С. Я. Авакова

1912

Իւր սիրելի ընկեր

ԳՐԻԴՈՐ ԲԵՆԵԼԵԱՆԻՆ

Նուիրում է

44759 - ա.բ.

ԹԱՐԴՄԱՆԻՉՐ



29366-63

ՈԳԻՆ ՄԻ՝ ՀԱՆԳՑՆԷՔ.

Ա.

Շատ են խօսում դպրոցի ծրագրի հիմնովին փոփոխութեան անհրաժեշտութեան մասին, մեծ ճիգ են թափում վերացնել մեռած լեզուները: Չարիքի արմատը սրանում չէ: Մեռած լեզուները չեն սարսափելին, սարսափելի է ուսուցման մեթոդները. սարսափելին այն է, որ դպրոցի որ առարկան էլ վերցնես, բոլորը մեռած լեզու է. լեզու, որ ոչինչ չի ասում աշակերտի մտքին ու սրտին: Քանի որ գործն այդպէս է դրուած, ինչպէս էլ փոփոխէք առարկաների ծրագիրը, էականը մնում է նոյնը: Փոխարինեցէք մեռած լեզուները, ըստ մեծի մասին, բնական գիտութիւններով, դպրոցն ոչինչ չի շահիլ: Մենք հազար տեսակ լատինական և յունական բացառութիւններ թութակաբար սովորել ենք անգիր, մեր տղայքն էլ պիտի սովորեն հազար տեսակ քերականական ձևեր, մկանների, կրճուկների և ողնաշարների անուններ:

Մեր դպրոցների չարիքը բազմաթիւ չոր, անհետաքրքիր գիտութիւնները մեքենայաբար,

բռնադրօսիկ կերպով իւրացնելու մէջն է կայանում: Գիտութեան, գիտական-կրթութեան անուան տակ տարէ-ցտարի, ամբողջ տասնեակ տարիներ աշակերտին առաջարկում են սոսկ թուեր, մեռած անուններ և չոր խօսքեր:

Աշխարհագրութեան ուսումնասիրութիւնը կայանում է նրանում, որ սովորում են մի շարք սարերի, գետերի, քաղաքների և ծովերի անուններ. պահանջում է ճիշտ իմանալ, թէ քանի ոտնաչափ այս ինչ սարը բարձր է ովկիանոսի մակերևոյթից, որքան բնակիչ կայ Տեխասում, քանի խոզ է մորթում ամեն տարի Չիկագոյում, քանի հատ կօշիկ է կարում Օստաշկովում, քանի հատ դանակ և մկրատ է շինում Պաւլովում, տարուայ մէջ քանի մառախլադատ օր է լինում Լօնդոնում: Թուեր, թուեր. սոսկ թուեր և մեռած անուններ: Աշխարհագրութեանը անծանօթ են կենդանի բնութեան պատկերները, կենդանիների զանազանակերպ աշխարհը, մարդկային գործունէութեան արտայայտութիւնը, այն է՝ բարքերը, սովորութիւնները, կեանքի եղանակը, արդիւնաբերութիւնը, արհեստը: Փոխանակ երևիսային թուեր սովորեցնելով տանջելու, թէ քանի քառակուսի մղոն տեղ է բռնում Սահարան, Յրանսիայում այգիները որքան տեղ են բռնում, որքան է հիւսիսային Ռուսաստանի ծովափնեայ շերտի երկարութիւնը, եթէ աշխարհագրութիւնը տար հպարտ անապատի օաղիսների հայեացքը փայփայող սարսափելի մրրիկների գեղարուեստական մի շարք պատկերներ, տար գինեգոր-

ծութեան, մեր ծովափնեայ բնակիչների չարքաշ աշխատանքի, վտանգալից կեանքի մի շարք պատկերներ, աշակերտն անյազ ուշադրութեամբ կհօրդէր ամեն մի խօսք, կգնահատէր դասի ամեն մի ըոպէն, և որ գլխաւորն է, ամբողջ աշխարհը կը ներկայանար նրան մի ինչ որ արտասովոր, հետաքրքրական, կենդանի և թանկագին մի բան: Երկրագնդիս զանազան անկիւնների մարդկանց գործունէութիւնը և եռացող կեանքը կ'ոգևորէին և նրան, կյարուցանէին նրանում դէպի մէկը բարի նախանձ, դէպի միւսը կարեկցութիւն, ցաւակցութիւն, կյարուցանէին նրանց օգնելու, նրանց ծանր կեանքը մի քիչ թեթեւացնելու ցանկութիւն: Ներկայումս աշխարհագրութեան դասերը մի տեսակ երկար, յոգնեցնող, ձանձրացնող գրասենեակի հաշիւներ են:

Վերցրէք պատմութիւնը, գրականութիւնը: Հարկւրաւոր էջեր կուրների, հաշտութիւնների, թագաւորների ծննդեան և մահուան թուականներով, Հինրիկոս Թոնորսների, Կարլոս Ջազատների, Յովհան Անխելքների անուններով են դարդարւած: Հաւաքել են յայտնի գործիչների հազարաւոր ծառայութեան ցուցակներ. ծնունդ է այս ինչ ժամանակին, արել է այս ինչ բանը, մեռել է այս ինչ բանից, և դա կոչւում է պատմութիւն: Պատմութիւնը ժողովրդի ուսուցիչն է. նա յարութիւն է տալու անցեալին: Պատմութիւնը առանձին հատուածական նուրբ զծերով պիտի վերարտադրէ անցեալի վառ և կենդանի

պատկերը այնպէս, ինչպէս Կիւմիէն գտած անգլոր՝ Զինգիւղեան ծնօտից վերաբրտադրեց ամբողջ մարմինը: Նա ոչ թէ սեղմ պիտի պատմէ, այլ վառ կերպով լուսաբանէ անցեալի դէպքերը, դարգացնէ պատանուն դարերի փորձերով, ներշնչէ նրան ծերունու իմաստութիւն, առանց նրա ճակատը կնճիռնելով դարգարելու և գլուխն ալեւորելու: Անցեալի գիտութիւնը նպաստում է ներկայի լաւ ըմբռնողութեան և ազազայի հիմնաւոր կազմակերպութեան:

Լաւ է գրուած դպրոցում և գրականութեան ուսումնասիրութիւնը: Գրականութեան պատշաճաւոր դասը կեանքի ուսումնասիրութիւնն է, թէ ինչպէս կայ նա, ինչպէս է առաջ գնում, ինչպէս է արտայայտում ժողովրդական ստեղծագործութեան մէջ:

Գրականութիւն սովորել, չի նշանակում մի քանի ոտանաւորներ, բնութեան գեղարուեստական նկարագրութիւններ անգիր անել, իւրացնել վէպի, դրամայի և պօէմայի բովանդակութիւնը: Հարկաւոր է գրողի ստեղծած պատկերները, տիպերը հասկանալ, իւրացնել նրա ոգին, մտքերը, դժգոհութիւնները, իդէաները. հարկաւոր է զգալ այն բոլորը, ինչով որ ապրել, տանջուել և ցաւել է այս կամ այն գեղարուեստագէտը:

Իսկական գրականութեան պատմութիւնը հանճարի սրտի պատմութիւնն է, որտեղ, ինչպէս հայելու մէջ, անդրադառնում է ամենօրեայ աշխարհը իւր ուրախութիւններով, վշտերով և արտասուախառն խնդրութեամբ: Արդեօք դրա նը-

ման մի բան տալիս է մեզ դպրոցը: Մենք երկաւր, ձանձրալի ժամերով նստում ենք դպրոցական նստարանի վրայ Լուկա Ժիտեադի, Դանիէլ Երսիկանի, Միլվեստի, Լոմոնոսովի և Կանտեմիրի շարադրութիւնների առաջ, և, ամօթ է ասելը, չգիտենք Դաստաւակուն, Տուրքենեին, նորագոյն գրողներից ոչ մէկին: Ի՞նչ կասէինք տեխնօլոգիային, եթէ մանրամասն խօսուէր նախնական կուլտուրայի տեխնիքական նոր գիւտերի մասին և թեթեւ, կողմնակի կերպով յիշուէր ժամանակակից շոգեկառքի, մեր ժամանակակի հսկայ շոգեկաթսայի, հրէշաւոր—բարդ մեքենաների մասին. մեղանում կենդանի մարդկանց գրականութիւնը ուսումնասիրում է իբրև մեռած լեզուներ և դրա համար էլ նա չի դարձեցնում կենդանի հետաքրքրութիւն:

Վերցրէք վերջապէս կրօնի դասերը: Ի՞նչպէս դրանք արժէքաւոր, ոսկի ժամեր պէտք է լինէին և ի՞նչպէս այդ դասերը յաճախ յոգնեցնող—ձանձրացնող—անյուսալի չոր ու ցամաք են:

Պատանեկութիւնը կեանքի ամենալաւ ժամանակն է, նա կեանքի դարունն է:

Միւրտը լիքն է սուրբ յոյգերով և երազներով, հոգին այրում է նուիրական կրակով: Տուէք ուրեմն պատանուն կենդանի խօսք և նա կնուիրուէ ձեզ, կըգայ ձեր յետևից և կեանքը կիւրծուի անընդհատ ժամերգութեան, սիրոյ և ճշմարտութեան Աստուծոյ սպասաւորութեան: Բայց այստեղ ևս մեռած գիրք, մեռած խօսքեր, մեռած տաղտկութիւն:

Դպրոցի մեռելութիւնը խեղդում, սպանում է աշակերտի մէջ ամեն մի կենդանի դպացմունք. բթացնում է ամեն մի հետաքրքրութիւն դէպի կենդանի գիտութիւն, կենդանի գործ և կեանքի ստեղծագործութիւն: Ապրել՝ նշանակում է ստեղծել, և դպրոցի գործը միայն այն է, որ աշակերտին որքան կարելի է քանակով շատ գիտութիւն մատակարարէ, (կեանքի մէջ միեւնոյնն է պէտք կլինի նորից սովորել) այլ այն է, որ սովորողների մէջ հետաքրքրութիւն զարթեցնէ դէպի գիտութիւնը, կեանքի աշխարհը և սովորեցնէ նրանց սիրել այդ բոլորը:

Դպրոցի դասերը հրաշալի գեղեցկուհու ժպտի նման պիտի յափշտակեն և գիւթեն պատանու սիրտը: Դպրոցն այդ բանը չի անում: Նրա դէմքին չկայ կեանքի լաղը, նա քնած է, քնած մեռելային քնով, և առաջինը մեր թագուհուն պէտք է զարթեցնել, վերցնել նրա վրայից մեռելութեան քօղը, փչել նրան կենդանի հոգի: Այս է դպրոցի առաջին և գլխաւոր էական ռեֆորմը: Բ.

Դպրոցի ռեֆորմի հարցերը քննելիս, չգիտեմ ինչու, ուշադրութեան մեծ մասը նուիրւում է համալսարանի կեանքին: Շատ են խօսում և գրում համալսարանի վերջին կանոնադրութիւնը փոխելու անհրաժեշտութեան մասին, խօսում են պրօֆէսորների և ուսանողների փոխադարձ յարաբերութեան ձևի մասին, մատնացոյց են անում այն դժուարութիւնը, որով ձեռք են բերւում գիտութեան աստիճանները և դրանց հետ

միասին պրօֆէսորական ամբիոնները: Այս բոլորն իհարկէ, ընդհանուր և խիստ կարեւոր հարցեր են, սակայն դրանք գլխաւոր համարել և կարծել, թէ այդ հարցերի կանոնաւոր լուծումով կաներեւութանան, եթէ ոչ բոլոր ուսուցչաց, գոնէ բարձրագոյն դպրոցի ցաւալի երեւոյթները, մեծ սխալ կլինէր: Նախ՝ ամեն մի կեանք ընդհանրապէս և դպրոցի կեանքը մասնաւորապէս, մեծաւ մասամբ անկախ է շրջաբերական հրամաններից: Կեանքը կատարելագործւում և փոխւում է մարդկանց միջոցով և ոչ թէ կանոնադրութեան այս կամ այն յօդուածի փոփոխութեամբ: Երկրորդ՝ եթէ բաղմայարկանի շինութեան գաղաթիւն հետաւում են մեծ ճեղքեր, ամբողջ շինութեան ամբողթեան համար բաւական չէ ճեղքերը ծածկելը. անհրաժեշտ է զննել իսկ հիմքը և այդ ամբացնել: Վերին յարկերի ճեղքը հիմքի խախտւած լինելու արդիւնքն է: Համալսարանի կեանքի էական անյարգարութիւնները և հիւսնդ երեւոյթները նախ և առաջ բոլոր ստորին և միջնակարգ դպրոցների անյարգարութեան և անկանոն դրուած լինելու հետեանք են:

Ուսանողութեան մութ կողմերը նոյն աշակերտութեան մութ կողմերն են միայն աւելի սուր, կծու արտայայտութիւններով:

Ուսանողը մտնում է համալսարան արդէն բնաւորութեան որոշ հիմնական յատկանիշներով, որոնք որպէս նուրբ գծեր հետադիմադիտելի են նրանում այն երկար տաբիներով ընթացքում, երբ նա գտնւում էր միջնակարգ դպր-

րոցում: Համալսարանը վերջը միայն, այսպէս
ասած, յատկօրէն իւր փորագրելով փորագրում
է արդէն ըստ ամենայնի պատրաստ արձանը:
Այդ պատճառով դպրոցական բեֆօրմի մասին
խորհրդածելիս գլխաւոր ուշադրութիւնը պէտք է
դարձնել ոչ թէ համալսարանի, այլ միջնակարգ
դպրոցի, այդ նախապատրաստական արհեստա-
նոցի գործի դրութեան վերայ, որտեղ կովւում,
ձևակերպւում է մեր երիտասարդութեան հիմ-
նական ուրուանկարը:

Բոլոր բարձրագոյն դպրոցների պրօֆէսոր-
ները միաձայն գանգատւում են, որ ուսանողու-
թեան մեծամասնութեան մէջ բացակայում է
լուրջ գիտական պատրաստականութիւն և հետա-
քըքրութիւն դէպի պարագմունքները:

Գրականութիւնը յանձին իւր խոշոր ներ-
կայացուցիչների տալիս է կամադուրկ, խոփռած,
«պատեանի» մարդկանց տիպեր:

Վերջապէս Մաքսիմ Գօրկու մէջ բերած
յաղթանակող բօսեակն ուղղակի մատնացոյց է
անում ժամանակակից ինտելիգենցիային կեն-
դանի, հետաքրքիր տիպերի բացակայութիւնը:

Այս բոլոր հոգեւոր թարշամութեան, յետա-
գայ մեր ամենամօտ սերնդի շարքի անկենդա-
նութեան ուժգին ազդանշաններն են: Պատճառը
դպրոցի մեռելութիւնն է, որի մասին մենք ար-
դէն խօսել ենք: Չի կարելի խեղդուել օդը տա-
նեակ տարիներ անպատիժ շնչել, չի կարելի ամ-
բողջ դասընթացքին դիակի մօտ նստել և տար-
բալուծման գարշահոտութիւնից չվարակուել:

Ի՞նչպէս ուրեմն կենդանացնենք մեր դըպ-
րոցը և ի՞նչպէս թօթափենք նրա մեռելութեան
լուծը: Ամենահին ժամանակները մի քանի բար-
բարոս ժողովրդների մէջ մի սարսափելի սովո-
րութիւն կար. քաղաք հիմնարկելիս կամ մեծ հա-
սարակական շէնքի հիմքը ձգելիս՝ տակը թաղում
էին կենդանի մարդ: Սարսափելի բարբարոսու-
թիւն, բայց եթէ աւելի խորը մտածես, դուրս է
գալիս, որ այս կոպիտ ձևն ունի մեծ խորհուրդ:
Խորին հնութիւնը զգացել է, որ ամեն մի հաս-
տատութիւն, ամեն մի գործ այն ժամանակ մի-
այն ամուր և կենդանի է, երբ որ նրա հիմքի
տակ դրուած է մարդու կենդանի հոգի, երբ մարդ
տալիս է գործին իւր բոլոր կենանքն և ինքն ի-
րան մինչև արեան վերջին կաթիլը:

Դպրոցն, անկասկած, մեծ գործ է անհա-
տական, հասարակական և պետական կեանքում:

Նա առաջնակարգ, կարեւոր հաստատութիւն
է: Արդեօք մենք հասկանում ենք այդ պարզօ-
րէն: Զգո՞ւմ ենք շօշափելի կերպով. դնո՞ւմ ենք
նրա մէջ կենդանի հոգի: Պահանջո՞ւմ ենք, աշ-
խատո՞ւմ ենք և անո՞ւմ ենք մի բան, որպէսզի
այն մարդիկ, որոնք գիտեն դպրոցի գործը, հոգ-
ւով նուիրուեն նրան:

Մեզանում ուսուցչութիւնը արհեստ է դար-
ձել: Կադմակերպուել է առանձին արհեստակցա-
կան ուսուցչական համբարութիւն: Մարդ ձեռք է
բերում արտաքին գիտութիւնների մի յայտնի
պաշար, տալիս է քննութիւն, ստանում է դիպ-
լոմ և նա համբարութեան իրաւատէլը անդամ է

գրեում. Իրք ուղէ, կարող է ուսուցիչ դառնալ: Արդեօք ունի՞ նա կոչումն, ուսուցչութեան ներքին շնորք, այս հարցերը ոչ ոքի մտքովն չի անցնում: Գործը շատ պարզ է որոշուում: Արհեստանոցում ազատ տեղ է բացուում, գալիս է դիպլոմաւոր մարդը և գործը գնում է ըստ իւր կարգին. մեքենայի անիւը պտըտուեց, նշանակուած արհեստաւորը սրում է մանուկներին ամենքի համար ցոյց տրուած, միատեսակ ընդհանուր ձևով: Այստեղ շատ բան չէ պահանջուում, միայն թէ կանոնաւոր յաճախէ արհեստաւորը և շարժէ մեքենան: Մինչդեռ ուսուցչութիւնը ամենեւին արհեստ չէ, նա արուեստ է, հիթէ կուզէք, ամենադժուար և ամենաազնիւ արուեստներից միինն է: Ճշմարիտ մանկավարժը, մանկավարժ իւր կոչումով և շնորհներով փոքր գեղարուեստագէտ չէ, եթէ մեծ չէ, քան Շէքսպիրը, Ռաֆայէլը, Տոուլայդսէնը, Կանովան:

Շէքսպիրը տալիս էր վառվռուն տիպեր, մարդու անմահ պատկերներ այնպէս, ինչպէս նա կայ իւր բոլոր մեծութեամբ և արատաւորութեամբ. ճշմարիտ մանկավարժը կոչուած է, որ ոչ թէ միայն գեղարուեստական պատկերների մէջ, այլ և կենդանի մարդկանց մէջ կրթէ ամենաւատարեալ մարդու ըէալ պատկերը:

Ռաֆայէլը կտաւի վերայ ներկերով, Տոուլայդսէնը կտաւի և մարմարիտի վերայ են արտայայտում իրանց ստեղծագործութիւնը, իսկ գեղարուեստագէտ մանկավարժը ստեղծագործում է երեխայի կենդանի հոգու վերայ:

Լուսամիտ ոգւով ներշնչուած անհատ, բարութեան հերոս կրթելն աւելի մեծ ծառայութիւն է, քան թէ կենդանացրած մարմարիտի վերայ կամ գեղարուեստական խօսքով նոյնպիսի վառ գոյներով պատկեր վերարտադրելը: Իհարկէ, հասկանալի է, որ այդպիսի աշխատանքը պահանջում է համապատասխան ձիրք, համապատասխան պատրաստականութիւն: Դա ամենքի գործը չէ:

Երբոր Հիլդենշտեռնը թագաւորի կողմից գնում է Համլէտի մօտ նրան հետամուտ լինելու, սկսում է մեղմօրէն հարց ու փորձ անել Համլէտին. վերջինս վեր է առնում սրինդն և տալով իւր խօսակցին խնդրում է.

— Նուագիւր մի բան.

— Ես չեմ նուագում, իշխան:

— Խնդրում եմ.

— Անկեղծ, չեմ կարող:

— Իսկ եթէ ես խնդրեմ:

— Ես գործիքը ձեռքս առնել չեմ կարող, իշխան:

— Այդ շատ հասարակ բան է. դիր մատնեբըդ վաղիչների վերայ, սրինգը դիր բերանիդ և փչիր:

— Այդ քիչ է իշխան. նուագելու համար հարկաւոր է նաև արուեստ:

— Ճիշտ է. ինչպէս ապա դու ուզում ես նուագել իմ հոգու վերայ... ճիշտիս ոչնչութեան տեղ ես դնում դու ինձ. միթէ լուրջ երեւակայեցիր, որ իմ վերայ աւելի հեշտ է նուագել, քան

թէ արնգի վերայ. թերեւս դու կարող ես ինձ
ջարդել-փշրել, բայց իմ հոգու վերայ նուագելու
յաջողութիւն չես ունենայ:

Շէքսպիրի այս համառօտ դիտողը արժէր
խոշոր տառերով գրել բոլոր ուսուցչական սե-
նականերում: Երեխայի հոգու վերայ նուագելու,
հրա ներքին աշխարհը ներդաշնակելու, նրանից
սիրոյ, բարութեան և ճշմարտութեան սքանչելի
մեղեդիներ դուրս բերելու համար, պահանջում է
մեծ արուեստ, երկամբ, լուրջ պատրաստութիւն:
Այդ աշխատանքը արհեստավորի ոյժից վեր է:
Նա պահանջում է գեղարուեստագէտ, կոչման և
բնական շնորքի տէր մարդ:

Պիտի առարկեն.— Ո՞րտեղից պիտի գտնէր
բոլոր դպրոցների համար գեղարուեստագէտ
մանկավարժներ: Զէ՞ որ այդպիսի մանկավարժ-
ները դարերի ընթացքում են ծնւում: Հաղիւ թէ:

«Не бездарна та природа;

«Не погибъ еще тотъ край,

«Что выводитъ изъ народа

«Столько славныхъ, то и знай—

«Столько добрыхъ, благородныхъ,

«Сильныхъ любящей душой».

Իհնարէ, ամեն դպրոցի համար Պետտալոց-
ցիներ, Կամենսկիներ, Պրոպոզիներ և Ուշինսկի-
ներ չի գտնուիլ. սակայն չէ՞ որ Շէքսպիրներ,
Ռաֆայէլներ, Ֆիդիոսներ չեն ծնւում, բայց և
այնպէս, արուեստը չի մեռնում: Խօ չէ՞ն տու-

ժում ոչ թատրոնը, ոչ գեղարուեստը և ոչ էլ
գրականութիւնը ոյժերի բացակայութիւնից:
Այստեղ բոլորը հանճարներ չեն. բաւական են
Աստուածանից տակայծեալ և իրանց գործը ջերմ
սիրող մարդիկ: Նոյն բանը դուրս կգար միւր
դպրոցից, եթէ նրա վրայ չնայէինք որպէս ար-
հեստանոցի, այլ նայէինք որպէս արուեստագէտի
նկարչարանի վերայ, որի մէջ աշխարհիս ամե-
նաթանկագին նիւթի, մարդկային մատաղ հոգու
հետ պէտք է դորձ ունենալ: Այն ժամանակ նոր
գործի համար կը գտնուէին և նոր մշակներ:

Այս դէպքում հասարակութեան վերաբեր-
մունքն էլ դէպի ուսուցչի աշխատանքը լինելու
է ոչ որպէս արհեստի, այլ գեղարուեստի:

Զի կարելի ուսուցչին պահել պօստային
ձիու զրութեան մէջ, որին շատ վաղցնում են,
բայց քիչ ուտացնում: Որքան էլ մարդ իդէալա-
կան լինի, ուտել, խմել և ընտանիք պահել պէտք
է: Եւ եթէ ճշմարիտ են ասում, որ միայն հացով
չի ապրում մարդս, դրանից պակաս ճշմարտու-
թիւն չէ այն, որ առանց հացի էլ չես կարող
ապրել:

Ես ճանաչում եմ մի քանի մարդկանց, ո-
րոնք խիստ սիրում են դպրոցը, երեխաներին,
վառ կերպով հետաքրքրւում են մանկավարժու-
թեամբ, բայց և այնպէս դպրոցի գործից հեռու
են կանգնած:

Մէկը բանկի դիրեկտոր է, միւսը ձիաբու-
ծութեամբ է պարապում, երրորդը գործարանա-
տէր է, վերջապէս չորրորդը մեծ կազմարանի

կառավարիչ՝ Ուսուցչութեան ծանր աշխատանքը
ամենքի բանը չէ, առաջին հնարաւոր դէպքում
ընդունակ, շնորհալի մարդիկ հեռանում են դըպ-
րոցից: Եւ եթէ հասարակութիւնը ուզում է, որ
դպրոցը կանգնած լինի իւր դերքի բարձրու-
թեան վերայ, դպրոցն այնպէս է դնելու, որ նա
բաց չթողնէ, այլ իրեն զրաւէ լաւ ոյժեր, շնոր-
հալի և կոչումով մարդիկ: Եթէ մենք ինչպէս
հարկն է հոգս չենք քաշում դպրոցի մասին,
չենք ցաւում նրա կարիքները համար, չենք աշ-
խատում բերել և դնել նրա գլխին կենդանի գոր-
ծիչներ, կենդանացուցիչ և ստեղծիչ հոգով մար-
դիկ, այն ժամանակ չարժէ և վանդատուել դըպ-
րոցի մեռելութեան և աւանդամոլութեան վերայ:

Ի՞նչ կցանես, այն կհնձես:



38917

Апр.
3-3763

92

Գինն է 5 հոսկ.

а

7

2013

ՀՀ Ազգային գրադարան



18888/

NL0053131

H | Apr

| 3-3763₂